ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

«23» սեպտեմբերի 2017թվականի № 116-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2016թ. նոյեմբերի 24-ի N115-Ա հրամանով հաստատված էներգետիկայի պետական տեսչության 2017 թվականի տեխնիկական ստուգումների տարեկան աշխատանքային ծրագիրը, Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի հուսալիության և անվտանգության չափանիշները պահպանելու նպատակով,

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական

տեսչության կողմից 2017 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում իրականացվելիք տեխնիկական ստուգումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության պետին. ապահովել ցանկում ներառված էներգատեղակայանքներում տեխնիկական ստուգումների իրականացումը՝ սահմանված ժամկետներում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և

բնական պաշարների նախարարի 23-ը սեպտեմբերի 2017թ. N 116-Ա հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

| h/h | Ստուգման օրերը | Ստուգման օբյեկտը, պատկանելիությունը | Ստուգում իրականացնող մասնագետները | Ստուգաթերթը, հարցերը | Ստուգման ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|---|
| 1 | հոկտեմբերի 04-06 | «Ազարակ» 110/35/6կՎ լարման ենթակայան (ԵԿ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ | բաժնի պետ Արսեն Դանիելյան<br>բաժնի պետ Անդրանիկ Ալեքսանյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |
| 2 | հոկտեմբերի 09-11 | «Մասիս» 110/35/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ | բաժնի պետ Բագրատ Միրզոյան<br>գլխավոր մասնագետ Գագիկ Միքայելյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |
| 3 | հոկտեմբերի 10-12 | «Ախթալա» 110/10կՎ լարման քարշային ԵԿ «Հարավ-կովկասյան երկաթուղի» («ՀԿԵ») ՓԲԸ | բաժնի պետ Գևորգ Զաքարյան<br>գլխավոր մասնագետ Ռուբեն Մարգարյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |
| 4 | հոկտեմբերի 18-20 | «Բյուրեղավան» 110/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ | գլխավոր մասնագետ Սասուն Գուլյան<br>գլխավոր մասնագետ Արսեն Կարապետյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | հոկտեմբերի 24-26 | «Էջմիածին» գազաբաշխիչ կայան (ԳԲԿ) «Գազպրոմ Արմենիա» («ԳԱ) ՓԲԸ | գլխավոր մասնագետ Ռուբեն Մարգարյան<br>գլխավոր մասնագետ Գևորգ Մնացականյան | Ստուգաթերթ N3, 1-29 հարցեր, | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |
| 6 | հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը | «Սպիտակ»110/35/10 կՎ լարման ԵԿ «ՀԷՑ» ՓԲԸ | բաժնի պետ Գևորգ Զաքարյան<br>գլխավոր մասնագետ Սասուն Գուլյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. հոկտեմբերից մինչև 2017թ. հոկտեմբեր |
| 7 | նոյեմբերի 06-08 | «Իլիչևսկ-Երևան» մայրուղային գազատար «ԳԱ» ՓԲԸ | բաժնի պետ Բագրատ Միրզոյան<br>գլխավոր մասնագետ Գագիկ Միքայելյան | Ստուգաթերթ N3, 1-29 հարցեր, | 2014թ. նոյեմբերից մինչև 2017թ. նոյեմբեր |
| 8 | նոյեմբերի 20-22 | «Սովետական» 110/10 կՎ լարման քարշային ԵԿ «ՀԿԵ» ՓԲԸ | բաժնի պետ Բագրատ Միրզոյան<br>գլխավոր մասնագետ Ռուբեն Մարգարյան | Ստուգաթերթ N1, 1-45 հարցեր | 2014թ. նոյեմբերից մինչև 2017թ. նոյեմբեր |
| 9 | նոյեմբերի 20-22 | «Լեռնապատ», «Տարոն», «Կուրթան» ԳԲԿ-եր «ԳԱ» ՓԲԸ | բաժնի պետ Գևորգ Զաքարյան<br>գլխավոր մասնագետ Գագիկ Միքայելյան | Ստուգաթերթ N3, 1-29 հարցեր, | 2014թ. նոյեմբերից մինչև 2017թ. նոյեմբեր |
| 10 | նոյեմբերի 20-24 | «Արագածոտն» ԳԳՄ «ԳԱ» ՓԲԸ | բաժնի պետ Արսեն Դանիելյան<br>գլխավոր մասնագետ Գևորգ Մնացականյան | Ստուգաթերթեր՝ N3, 1-29 հարցեր, N5, 1-32 հարցեր | 2014թ. նոյեմբերից մինչև 2017թ. նոյեմբեր |